ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունիսի 2025 թվականի N 740 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի N 1332-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 3-ի «Ջրօգտագործման թույլտվության տրամադրման, դրա ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, վերանայման, կասեցման, ուժը կորցրած ճանաչելու, դադարեցման կարգերը և ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը, հորատանցքի անձնագրերի, հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման՝

1) N 1 հավելվածի՝

ա. 4-րդ կետից «թղթային կամ» բառերը հանել,

բ. 6-րդ կետում «գրավոր» բառը փոխարինել «էլեկտրոնային եղանակով» բառերով,

գ. 10-րդ կետի 5-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ ենթակետով.

«6) Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվությունը՝ նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա լինելու մասին:»,

դ. 11-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) մարդկանց բարեկեցության և շրջակա միջավայրի պահպանություն ու բարելավում՝ առաջին հերթին ապահովելով խմելու ջրամատակարարումը և ջրահեռացումը.»,

ե. 14-րդ կետում «վավերացնում» բառը փոխարինել «էլեկտրոնային եղանակով տրամադրում ջրօգտագործողին» բառերով,

զ. 15-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

է. 20-րդ կետը «դիմում է» բառից առաջ լրացնել «էլեկտրոնային եղանակով» բառերով,

ը. 21-րդ կետը «դիմում է» բառից առաջ լրացնել «էլեկտրոնային եղանակով» բառերով,

թ. 23-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) N 2 հավելվածի՝

ա. 1-ին կետում «կցելով ջրօգտագործման թույլտվության բնօրինակը» բառերը փոխարինել «էլեկտրոնային եղանակով» բառերով,

բ. 3-րդ կետում «սույն կարգի» բառերը հանել, իսկ «ծանուցում է» բառերից առաջ լրացնել «էլեկտրոնային եղանակով» բառերով,

գ. 5-րդ կետում «և հրավիրում իր կողմից վավերացնել երկարաձգման ենթակա ջրօգտագործման թույլտվությունը» բառերը փոխարինել «՝ ծանուցումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պետական տուրքը սահմանված կարգով ու չափով վճարելու համար» բառերով,

դ. 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

ե. 7-րդ կետում «հրավիրում ջրօգտագործողին երկարաձգված ջրօգտագործման թույլտվության իր օրինակն ստանալու համար» բառերը փոխարինել «էլեկտրոնային եղանակով տրամադրում ջրօգտագործողին երկարաձգված ջրօգտագործման թույլտվությունը» բառերով,

զ. 11-րդ կետից «գրավոր» բառը հանել,

է. 14-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) N 3 հավելվածի՝

ա. 1-ին կետից «ջրօգտագործման թույլտվության բնօրինակը և» բառերը հանել,

բ. 3-րդ կետից «ջրօգտագործման թույլտվության բնօրինակը և» բառերը հանել,

գ. 5-րդ կետում «և հրավիրում իր կողմից վավերացնելու վերաձևակերպված ջրօգտագործման թույլտվությունը» բառերը փոխարինել «՝ ծանուցումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պետական տուրքը սահմանված կարգով ու չափով վճարելու համար» բառերով,

դ. 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

ե. 7-րդ կետում «հրավիրում ջրօգտագործողին վերաձևակերպված ջրօգտագործման թույլտվության իր օրինակն ստանալու համար» բառերը փոխարինել «էլեկտրոնային եղանակով տրամադրում ջրօգտագործողին վերաձևակերպված ջրօգտագործման թույլտվությունը» բառերով,

զ. 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

է. 13-րդ կետը «ծանուցում է» բառերից առաջ լրացնել «էլեկտրոնային եղանակով» բառերով.

4) N 4 հավելվածի՝

ա. 2-րդ կետում «գրավոր» բառը փոխարինել «էլեկտրոնային եղանակով» բառերով, իսկ «ջրօգտագործման թույլտվությունը վերանայման ներկայացնելու» բառերը՝ «ջրօգտագործման թույլտվության վերանայման» բառերով,

բ. 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

գ. 4-րդ կետից «ջրօգտագործման թույլտվության բնօրինակի հետ միասին» բառերը հանել,

դ. 5-րդ կետում «հրավիրում իր կողմից վավերացնելու» բառերը փոխարինել «էլեկտրոնային եղանակով տրամադրում» բառերով,

ե. 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

5) N 5 հավելվածի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

6) N 7 հավելվածի՝

ա. 3-րդ կետում «գրավոր դիմում է լիազոր մարմնին՝ դիմումին կցելով ջրօգտագործման թույլտվության իր օրինակը և» բառերը փոխարինել «էլեկտրոնային եղանակով դիմում է լիազոր մարմնին՝ դիմումում» բառերով,

բ. 4-րդ կետից «ջրօգտագործման թույլտվության բնօրինակի հետ միասին» բառերը հանել.

7) N 8 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

8) N 9 հավելվածի «Բնաղբյուրի անձնագրի» ձևի IV բաժնի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« 10. Աղային կազմի բանաձև (ըստ Կուրլովի)

$$M_ \quad \frac{HCO^3 __ Cl __ SO_4 __}{Ca __ Mg __ Na+K __}$$ ».

9) N 1 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**<u>Ձև N 1</u>**

ՀԱՅՏ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ

1. Հայտատուի անձնական տվյալները՝

_____

(Ֆիզիկական անձի (անունը, ազգանունը, բնակության վայրը) կամ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, հեռ.համարը, էլ.հասցեն)

_____

2. Ջրօգտագործման նպատակը

_____

(խմելու-կենցաղային, գյուղատնտեսական, արդյունաբերական,
ձկնաբուծական, էներգետիկ, և այլ)

_____

3. Ջրառի վայրը _____

(մարզ, համայնք, գյուղ)

_____

4. Ջրային ռեսուրսի անվանումը և ջրառի (ջրօգտագործման) ծավալը՝

1)_____

(մակերևութային ջրային ռեսուրսի անվանումը, ջրօգտագործման ծավալը (հազ.մ^3/տարի,
մ^3/օր, լ/վրկ)

_____

2)_____

(ստորերկրյա ջրային ռեսուրսների անվանումը, ջրօգտագործման ծավալը (հազ. մ^3/տարի,
մ^3/օր, լ/վրկ)

_____

5. Ջրօգտագործման վայրը

_____

(մարզ, համայնք, գյուղ)

_____

6. Ջրօգտագործման ժամանակահատվածը և ռեժիմը

_____

(ամիս, օր, ժամ)

7. Սերվիտուտ կամ այլ պահանջներ

_____

(սերվիտուտ կամ այլ անձանց սեփականությունից

_____

/ջրընդունիչ, կառուցվածք և այլն/ օգտվելու անհրաժեշտություն, պայմանագիր)

8. Հիդրոտեխնիկական կառույցի մասին տեղեկատվություն՝

_____

(ՀՏԿ-ի առկայություն, նոր ՀՏԿ-ի կառուցման անհրաժեշտություն, հզորություն, ՀՏԿ-ի վերազինում)

_____

9. Ջրահեռացման վայրը

_____

_____

10. Առաջացող կեղտաջրերի ծավալը և վայրը

_____

(հազ. մ³/տարի, մ³/օր, լ/վրկ)

_____

11. Առաջացող կեղտաջրերի մաքրման եղանակը

_____

_____

12.Կրկնակի (երկրորդային) ջրօգտագործում

_____

(հազ. մ³/տարի, մ³/օր, լ/վրկ)

_____

13. Պարտավորություն ջրօգտագործման թույլտվությանն առնչվող վճարների կատարումն ապահովելու համար ,

_____

_____

14. Ջրօգտագործման և ջրահեռացման, թույլատրելի սահմանային արտահոսքի նորմերի հաշվարկ իրականացրած ծանուցված գործունեություն իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձի անունը

_____

_____

Սույնով հաստատում եմ հայտում ներառված տեղեկատվության բավարար, ճշգրիտ և ավարտուն լինելը:

Ոչ մի առարկություն չունեմ հայտի քննարկմանը, հասարակական մոտեցումների կամ մասնակցության դեմ (բացի գաղտնի տեղեկատվությունից):

Պարտավորվում եմ կատարել Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի պահանջներին համապատասխան ջրօգտագործման թույլտվության մեջ նշված՝ ջրօգտագործողին վերաբերող պարտավորությունները:

Ջրօգտագործման թույլտվության հայտատու

_____

(ստորագրությունը) ».

10) Ջրօգտագործման թույլտվության համար պահանջվող փաստաթղթերի ցանկը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ց Ա Ն Կ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

ԽՄԵԼՈՒ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ		
NN ը/կ	Ջրօգտագործում ստորերկրյա ջրային ռեսուրսից	Ջրօգտագործում մակերևութային ջրային ռեսուրսից

1.	Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման (ռեգիստրի) վկայականի պատճենը:	Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման (ռեգիստրի) վկայականի պատճենը:
2.	Ջրօգտագործման վայրի հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ համասեփականության դեպքում՝ համասեփականատիրոջ/ համասեփականատերերի գրավոր համաձայնությունը:	Ջրօգտագործման վայրի հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ համասեփականության դեպքում՝ համասեփականատիրոջ/ համասեփականատերերի գրավոր համաձայնությունը:
3.	Սերվիտուտի իրավունքի անհրաժեշտության դեպքում՝ սերվիտուտի կամ համապատասխան գույքից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:	Սերվիտուտի իրավունքի անհրաժեշտության դեպքում՝ սերվիտուտի կամ համապատասխան գույքից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:
4.	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 354-Ն որոշման համաձայն հաշվարկված ջրօգտագործման անհատական նորմաներ՝ ջրառի չափաքանակ և ռեժիմ: Չկոյուղացված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական կամ համայնքային ոչ	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 354-Ն որոշման համաձայն հաշվարկված ջրօգտագործման անհատական նորմաներ՝ ջրառի չափաքանակ և ռեժիմ: Չկոյուղացված համայնքներում տեղական ինքնակառավարման

	առևտրային կազմակերպությունների կողմից ջրօգտագործման թույլտվության հայցման դեպքում՝ ջրառի չափաքանակ և ռեժիմ (ջրապահանջարկի հաշվարկ):	մարմինների կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ջրօգտագործման թույլտվության հայցման դեպքում՝ ջրառի չափաքանակ և ռեժիմ (ջրապահանջարկի հաշվարկ):
5.	Կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) նորմաները (կոյուղու կոլեկտոր կամ բաց ջրավազան հեռացնելու դեպքում)՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման և ՀՀ բնապահպանության նախարարի 2003 թվականի դեկտեմբերի 10-ի N 464-Ն հրամանի պահանջների համաձայն (բացառությամբ չկոյուղացված համայնքների):	Կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) նորմաները (կոյուղու կոլեկտոր կամ բաց ջրավազան հեռացնելու դեպքում)՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման և ՀՀ բնապահպանության նախարարի 2003 թվականի դեկտեմբերի 10-ի N 464-Ն հրամանի պահանջների համաձայն (բացառությամբ չկոյուղացված համայնքների):
6.	Տեղանքի սխեմա-հատակագիծ, որտեղ նշված են ջրառի և ջրահեռացման կետերը՝ աշխարհագրական կոորդինատներով (նույնականացման անհրաժեշտություն առաջանալու դեպքում նաև WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով):	Տեղանքի սխեմա-հատակագիծ, որտեղ նշված են ջրառի և ջրահեռացման կետերը՝ աշխարհագրական կոորդինատներով (նույնականացման անհրաժեշտություն առաջանալու դեպքում նաև WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով):

7.	Համապատասխան փաստաթուղթ (եզրակացություն)՝ տրված ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջության բնագավառում գործունեություն իրականացնող պետական կազմակերպության կողմից:	Համապատասխան փաստաթուղթ (եզրակացություն)՝ տրված բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգու-թյան ապահովման և հանրային առողջության բնագավառում գոր-ծունեություն իրականացնող պետական կազմակերպության կողմից:
8.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթո-րինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված՝ 1) հիդրոերկրաբանական տեղեկատվություն, 2) բնաղբյուրի դեպքում՝ բնաղբյուրի անձնագիր, 3) հորատանցքի դեպքում՝ հորատանցքի անձնագիր:	
9.		Գետից ջրառ իրականացնելու դեպքում՝ բնապահպանական (էկոլոգիական) թողքի հաշվարկ՝ ՀՀ կառավարության 2011 թվակա-նի հունիսի 30-ի N 927-Ն որոշման 1-ին հավելվածի համաձայն:
10.	Խմելու ջրամատակարարում իրականացնող կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տեղեկանք՝ տվյալ տարածքում խմելու ջրով չապահովելու մասին:	Խմելու ջրամատակարարում իրականացնող կազմակերպության կամ տեղա-կան ինքնակառավարման մարմնի

		կողմից տեղեկանք տվյալ տարածքը խմելու ջրով չապահովելու մասին:
11.	Արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումների պլան-ժամանակացույց՝ մշակված ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 118-Ն որոշման պահանջների համաձայն:	Արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումների պլան-ժամանակացույց՝ մշակված ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 118-Ն որոշման պահանջների համաձայն:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ		
NN ը/կ	Ջրօգտագործում ստորերկրյա ջրային ռեսուրսից	Ջրօգտագործում մակերևութային ջրային ռեսուրսից
1.	Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման (ռեգիստրի) վկայականի պատճենը:	Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման (ռեգիստրի) վկայականի պատճենը:
2.	Ջրօգտագործման վայրի հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ	Ջրօգտագործման վայրի հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը,

	համասեփականության դեպքում՝ համասեփականատիրոջ/ համասեփականատերերի գրավոր համաձայնությունը:	իսկ համասեփականության դեպքում՝ համասեփականատիրոջ/ համասեփականատերերի գրավոր համաձայնությունը:
3.	Սերվիտուտի իրավունքի անհրաժեշտության դեպքում՝ սերվիտուտի կամ համապատասխան գույքից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:	Սերվիտուտի իրավունքի անհրաժեշտության դեպքում՝ սերվիտուտի կամ համապատասխան գույքից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:
4.	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 354-Ն որոշման համաձայն հաշվարկված ջրօգտագործման անհատական նորմաներ՝ ջրառի չափաքանակ և ռեժիմ (ջրապահանջարկի հաշվարկ):	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 354-Ն որոշման համաձայն հաշվարկված ջրօգտագործման անհատական նորմաներ՝ ջրառի չափաքանակ և ռեժիմ (ջրապահանջարկի հաշվարկ):
5.	Տեղանքի սխեմա-հատակագիծ, որտեղ նշված են ջրառի և ջրահեռացման կետերը՝ աշխարհագրական կոորդինատներով (նույնականացման անհրաժեշտություն առաջանալու դեպքում նաև WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով):	Տեղանքի սխեմա-հատակագիծ, որտեղ նշված են ջրառի և ջրահեռացման կետերը՝ աշխարհագրական կոորդինատներով (նույնականացման անհրաժեշտություն առաջանալու դեպքում նաև WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով):
6.	Տեղեկանք Ջրօգտագործողների ընկերությունների կողմից տվյալ տարածքը չսպասարկելու վերաբերյալ:	Տեղեկանք Ջրօգտագործողների ընկերությունների կողմից տվյալ տարածքը չսպասարկելու վերաբերյալ:

7.	Ջրօգտագործողների ընկերությունների կողմից ջրօգտագործման թույլտվությունների հայցման դեպքում՝ տեղեկանք ջրապահանջի հաշվարկներով ներկայացված ռռոգելի հողատարածքների մակերեսների վերաբերյալ՝ հաստատված համայնքների ղեկավարների կողմից:	Ջրօգտագործողների ընկերությունների կողմից ջրօգտագործման թույլտվությունների հայցման դեպքում՝ տեղեկանք ջրապահանջի հաշվարկներով ներկայացված ռռոգելի հողատարածքների մակերեսների վերաբերյալ՝ հաստատված համայնքների ղեկավարների կողմից:
8.	Ջրօգտագործողների ընկերությունների ջրօգտագործման թույլտվությունների դեպքում՝ փաստաթուղթ ջրառի համար նախատեսվող հորատանցքերի պատկանելիության վերաբերյալ:	Ջրօգտագործողների ընկերությունների ջրօգտագործման թույլտվությունների դեպքում՝ հաստատված փաստաթուղթ ջրային համակարգերի միջոցով ջրառ իրականացնելու և այդ համակարգերի պատկանելիության վերաբերյալ:
9.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված՝ 1) հիդրոերկրաբանական տեղեկատվություն, 2) բնաղբյուրի դեպքում՝ բնաղբյուրի անձնագիր, 3) հորատանցքի դեպքում՝ հորատանցքի անձնագիր:	
10.		Գետից ջրառ իրականացնելու դեպքում՝ բնապահպանական

		(էկոլոգիական) թողքի հաշվարկ՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 927-Ն որոշման 1-ին հավելվածի համաձայն:
11.		Ջրային համակարգերի միջոցով նախատեսվող ջրառի դեպքում՝ փաստաթուղթ ջրային համակարգերի թողունակության և ջրառի իրականացման վերաբերյալ ջրային համակարգերը տնօրինող կազմակերպության կողմից:
12.	Արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումների պլան-ժամանակացույց՝ մշակված ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 118-Ն որոշման պահանջների համաձայն:	Արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումների պլան-ժամանակացույց՝ մշակված ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 118-Ն որոշման պահանջների համաձայն:

ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ		
NN ը/կ	Ջրօգտագործում ստորերկրյա ջրային ռեսուրսից	Ջրօգտագործում մակերևութային ջրային ռեսուրսից
1.	Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իրավաբանական անձի	Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իրավաբանական անձի

	դեպքում՝ պետական գրանցման (ռեգիստրի) վկայականի պատճենը:	դեպքում՝ պետական գրանցման (ռեգիստրի) վկայականի պատճենը:
2.	Ջրօգտագործման վայրի հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ համասեփականության դեպքում՝ համասեփականատիրոջ/ համասեփականատերերի գրավոր համաձայնությունը:	Ջրօգտագործման վայրի հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ համասեփականության դեպքում՝ համասեփականատիրոջ/ համասեփականատերերի գրավոր համաձայնությունը:
3.	Սերվիտուտի իրավունքի անհրաժեշտության դեպքում՝ սերվիտուտի կամ համապատասխան գույքից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:	Սերվիտուտի իրավունքի անհրաժեշտության դեպքում՝ սերվիտուտի կամ համապատասխան գույքից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:
4.	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 354-Ն որոշման համաձայն հաշվարկված ջրօգտա-գործման անհատական նորմաներ՝ ջրառի չափաքանակ և ռեժիմ:	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 354-Ն որոշման համաձայն հաշվարկված ջրօգտագործման անհատական նորմաներ՝ ջրառի չափաքանակ և ռեժիմ:
5.	Կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) նորմաները (կոյուղու կոլեկտոր կամ բաց ջրավազան հեռացնելու	Կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) նորմաները (կոյուղու կոլեկտոր կամ բաց ջրավազան հեռացնելու դեպքում)՝

	դեպքում)՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման և ՀՀ բնապահպանության նախարարի 2003 թվականի դեկտեմբերի 10-ի N 464-Ն հրամանի պահանջների համաձայն:	ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման և ՀՀ բնապահպանության նախարարի 2003 թվականի դեկտեմբերի 10-ի N 464-Ն հրամանի պահանջների համաձայն:
6.	Տեղանքի սխեմա-հատակագիծ, որտեղ նշված են ջրառի և ջրահեռացման կետերը՝ աշխարհագրական կոորդինատներով (նույնականացման անհրաժեշտություն առաջանալու դեպքում նաև WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով):	Տեղանքի սխեմա-հատակագիծ, որտեղ նշված են ջրառի և ջրահեռացման կետերը՝ աշխարհագրական կոորդինատներով (նույնականացման անհրաժեշտություն առաջանալու դեպքում նաև WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով):
7.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնի-թորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված՝ 1) հիդրոերկրաբանական տեղեկատվու-թյուն, 2) բնաղբյուրի դեպքում՝ բնաղբյուրի անձնագիր, 3) հորատանցքի դեպքում՝ հորա-տանցքի անձնագիր:	
8.		Գետից ջրառ իրականացնելու դեպքում՝ բնապահպանական (էկոլոգիական) թողքի հաշվարկ՝ ՀՀ կառավարության

		2011 թվականի հունիսի 30-ի N 927-Ն որոշման 1-ին հավելվածի համաձայն:
9.	Ցամաքուրդային (դրենաժային) համակարգ ջրահեռացման դեպքում՝ ցամաքուրդային (դրենաժային) համակարգերը շահագործող կազմակերպության հետ կնքած պայմանագրի պատճենը:	Ցամաքուրդային (դրենաժային) համակարգ ջրահեռացման դեպքում՝ ցամաքուրդային (դրենաժային) համակարգերը շահագործող կազմակերպության հետ կնքած պայմանագրի պատճենը:
10.		Ջրային համակարգերի միջոցով նախատեսվող ջրառի դեպքում՝ փաստաթուղթ ջրային համակարգերի թողունակության և ջրառի իրականացման վերաբերյալ ջրային համակարգերը տնօրինող կազմակերպության կողմից:
11.	Արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումների պլան-ժամանակացույց՝ մշակված ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 118-Ն որոշման պահանջների համաձայն:	Արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումների պլան-ժամանակացույց՝ մշակված ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 118-Ն որոշման պահանջների համաձայն:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ		
NN ը/կ	Ջրօգտագործում ստորերկրյա ջրային ռեսուրսից	Ջրօգտագործում մակերևութային ջրային ռեսուրսից

1.	Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման (ռեգիստրի) վկայականի պատճենը:	Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման (ռեգիստրի) վկայականի պատճենը:
2.	Ջրօգտագործման վայրի հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ համասեփականության դեպքում՝ համասեփականատիրոջ/ համասեփականատերերի գրավոր համաձայնությունը:	Ջրօգտագործման վայրի հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ համասեփականության դեպքում՝ համասեփականատիրոջ/ համասեփականատերերի գրավոր համաձայնությունը:
3.	Սերվիտուտի իրավունքի անհրաժեշտության դեպքում՝ սերվիտուտի կամ համապատասխան գույքից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:	Սերվիտուտի իրավունքի անհրաժեշտության դեպքում՝ սերվիտուտի կամ համապատասխան գույքից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:
4.	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 354-Ն որոշման համաձայն հաշվարկված ջրօգտագործման անհատական նորմաներ՝ ջրառի չափաքանակ և ռեժիմ:	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 354-Ն որոշման համաձայն հաշվարկված ջրօգտագործման անհատական նորմաներ՝ ջրառի չափաքանակ և ռեժիմ:
5.	Կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) նորմաները (կոյուղու կոլեկտոր կամ բաց ջրավազան հեռացնելու դեպքում)՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի	Կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) նորմաները (կոյուղու կոլեկտոր կամ բաց ջրավազան հեռացնելու դեպքում)՝ ՀՀ կառավարության 2011 թվականի

	27-ի N 75-Ն որոշման և ՀՀ բնապահ-պանության նախարարի 2003 թվականի դեկտեմբերի 10-ի N 464-Ն հրամանի պահանջների համաձայն:	հունվարի 27-ի N 75-Ն որոշման և ՀՀ բնապահպանության նախարարի 2003 թվականի դեկտեմբերի 10-ի N 464-Ն հրամանի պահանջների համաձայն:
6.	Տեղանքի սխեմա-հատակագիծ, որտեղ նշված են ջրառի և ջրահեռացման կետերը՝ աշխարհագրական կոորդի-նատներով (նույնականացման անհրա-ժեշտություն առաջանալու դեպքում նաև WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինա-տային համակարգով):	Տեղանքի սխեմա-հատակագիծ, որտեղ նշված են ջրառի և ջրահեռացման կետերը՝ աշխարհագրական կոորդի-նատներով (նույնականացման անհրա-ժեշտություն առաջանալու դեպքում նաև WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինա-տային համակարգով):
7.	ՀՀ շրջակա միջավայրի նախարա-րության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված՝ 1) հիդրոերկրաբանական տեղեկատվու-թյուն, 2) բնաղբյուրի դեպքում՝ բնաղբյուրի անձնագիր, 3) հորատանցքի դեպքում՝ հորատանցքի անձնագիր:	
8.		Գետից ջրառ իրականացնելու դեպքում՝ բնապահպանական (էկոլոգիական) թողքի հաշվարկ՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 927-Ն որոշման 1-ին հավելվածի համաձայն:
9.		Ձրային համակարգերի միջոցով նախատեսվող ջրառի դեպքում՝

		փաստաթուղթ ջրային համակարգերի թողունակության և ջրառի իրականացման վերաբերյալ ջրային համակարգերը տնօրինող կազմակերպության կողմից:
10.	Անհրաժեշտությունից ելնելով՝ կախված գործունեության տեսակից համապատասխան փաստաթուղթ (եզրակացություն)՝ տրված ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջության բնագավառում գործունեություն իրականացնող պետական կազմակերպության կողմից:	Անհրաժեշտությունից ելնելով՝ կախված գործունեության տեսակից համապատասխան փաստաթուղթ (եզրակացություն)՝ տրված ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջության բնագավառում գործունեություն իրականացնող պետական կազմակերպության կողմից:
11.	Արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումների պլան-ժամանակացույց՝ մշակված ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 118-Ն որոշման պահանջների համաձայն:	Արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումների պլան-ժամանակացույց՝ մշակված ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 118-Ն որոշման պահանջների համաձայն:

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ		
NN ը/կ	Ջրօգտագործում ստորերկրյա ջրային ռեսուրսից	Ջրօգտագործում մակերևութային ջրային ռեսուրսից

1.	Իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման (ռեգիստրի) վկայականի պատճենը:	Իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման (ռեգիստրի) վկայականի պատճենը:
2.	Ջրօգտագործման վայրի հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, ջրառի վայրի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը, իսկ համասեփականության դեպքում՝ համասեփականատիրոջ/ համասեփականատերերի գրավոր համաձայնությունը:	Ջրօգտագործման վայրի հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, ջրառի վայրի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը, իսկ համասեփականության դեպքում՝ համասեփականատիրոջ/ համասեփականատերերի գրավոր համաձայնությունը:
3.	Սերվիտուտի իրավունքի անհրաժեշտության դեպքում՝ սերվիտուտի կամ համապատասխան գույքից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:	Սերվիտուտի իրավունքի անհրաժեշտության դեպքում՝ սերվիտուտի կամ համապատասխան գույքից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:
4.	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 354-Ն որոշման համաձայն հաշվարկված ջրօգտագործման անհատական նորմաներ՝ ջրառի չափաքանակ և ռեժիմ:	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 354-Ն որոշման համաձայն հաշվարկված ջրօգտագործման անհատական նորմաներ՝ ջրառի չափաքանակ և ռեժիմ:
5.	Տեղանքի սխեմա-հատակագիծ, որտեղ նշված են ջրառի և ջրահեռացման կետերը՝ աշխարհագրական կոորդինատներով (նույնականացման անհրաժեշտություն առաջանալու դեպքում նաև	Տեղանքի սխեմա-հատակագիծ, որտեղ նշված են ջրառի և ջրահեռացման կետերը՝ աշխարհագրական կոորդինատներով (նույնականացման անհրաժեշտություն առաջանալու դեպքում նաև

	WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինա-տային համակարգով):	WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինա-տային համակարգով):
6.	Հիդրոէլեկտրակայանների կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորումը (ՏՏՀ):	Հիդրոէլեկտրակայանների կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորումը (ՏՏՀ):
7.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարու-թյան «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված՝ բնաղբյուրի անձնագիր:	
8.		Գետից ջրառ իրականացնելու դեպքում՝ բնապահպանական (էկոլոգիական) թողքի հաշվարկ՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 927-Ն որոշման 1-ին հավելվածի համաձայն:
9.		Ջրային համակարգերի միջոցով նախատեսվող ջրառի դեպքում՝ փաստաթուղթ ջրային համակարգերի թողունակության և ջրառի իրականացման վերաբերյալ ջրային համակարգերը տնօրինող կազմակերպության կողմից:
10.	Արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի բարե-լավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումների պլան-ժամանակացույց՝ մշակված ՀՀ կառա-վարության 2010 թվականի հունվարի	Արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի բարե-լավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումների պլան-ժամանակացույց՝ մշակված ՀՀ կառա-վարության 2010 թվականի հունվարի

	14-ի N 118-Ն որոշման պահանջների համաձայն:	14-ի N 118-Ն որոշման պահանջների համաձայն:

ԱՅԼ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ		
NN ը/կ	Ջրօգտագործում ստորերկրյա ջրային ռեսուրսից	Ջրօգտագործում մակերևութային ջրային ռեսուրսից
1.	Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման (ռեգիստրի) վկայականի պատճենը:	Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման (ռեգիստրի) վկայականի պատճենը:
2.	Ջրօգտագործման վայրի հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ համասեփականության դեպքում՝ համասեփականատիրոջ/ համասեփականատերերի գրավոր համաձայնությունը:	Ջրօգտագործման վայրի հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ համասեփականության դեպքում՝ համասեփականատիրոջ/ համասեփականատերերի գրավոր համաձայնությունը:
3.	Սերվիտուտի իրավունքի անհրաժեշտության դեպքում՝ սերվիտուտի և համապատասխան գույքից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:	Սերվիտուտի իրավունքի անհրաժեշտության դեպքում՝ սերվիտուտի և համապատասխան գույքից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:
4.	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 354-Ն որոշման համաձայն	ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 13-ի N 354-Ն որոշման համաձայն հաշվարկված ջրօգտագործման

	հաշվարկված ջրօգտագործման անհատական նորմաներ՝ ջրառի չափաքանակ և ռեժիմ:	անհատական նորմաներ՝ ջրառի չափաքանակ և ռեժիմ:
5.	Կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) նորմաները (կոյուղու կոլեկտոր կամ բաց ջրավազան հեռացնելու դեպքում)՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման և ՀՀ բնապահպանության նախարարի 2003 թվականի դեկտեմբերի 10-ի N 464-Ն հրամանի պահանջների համաձայն:	Կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) նորմաները (կոյուղու կոլեկտոր կամ բաց ջրավազան հեռացնելու դեպքում)՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման և ՀՀ բնապահպանության նախարարի 2003 թվականի դեկտեմբերի 10-ի N 464-Ն հրամանի պահանջների համաձայն:
6.	Տեղանքի սխեմա-հատակագիծ, որտեղ նշված են ջրառի և ջրահեռացման կետերը՝ աշխարհագրական կոորդինատներով (նույնականացման անհրաժեշտություն առաջանալու դեպքում նաև WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով):	Տեղանքի սխեմա-հատակագիծ, որտեղ նշված են ջրառի և ջրահեռացման կետերը՝ աշխարհագրական կոորդինատներով (նույնականացման անհրաժեշտություն առաջանալու դեպքում նաև WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով):
7.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված՝ 1) հիդրոերկրաբանական տեղեկատվություն,	

	2) բնաղբյուրի դեպքում՝ բնաղբյուրի անձնագիր, 3) հորատանցքի դեպքում՝ հորատանցքի անձնագիր:	
8.		Գետից ջրառ իրականացնելու դեպքում՝ բնապահպանական (էկոլոգիական) թողքի հաշվարկ՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 927-Ն որոշման 1-ին հավելվածի համաձայն:
9.		Ցամաքուրդային (դրենաժային) համակարգ ջրահեռացման դեպքում՝ ցամաքուրդային (դրենաժային) համակարգերը շահագործող կազմակերպության հետ կնքած պայմանագրի պատճենը:
10.		Ջրային համակարգերի միջոցով նախատեսվող ջրառի դեպքում՝ փաստաթուղթ ջրային համակարգերի թողունակության և ջրառի իրականացման վերաբերյալ ջրային համակարգերը տնօրինող կազմակերպության կողմից:
11.	Արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումների պլան-	Արդի տեխնոլոգիաների կիրառմամբ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումների պլան-

	ժամանակացույց՝ մշակված ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 118-Ն որոշման պահանջների համաձայն:	ժամանակացույց՝ մշակված ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 118-Ն որոշման պահանջների համաձայն:

ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ՀՈՐԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ	
NN ը/կ	Ջրօգտագործում ստորերկրյա ջրային ռեսուրսից
1.	Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման (ռեգիստրի) վկայականի պատճենը:
2.	Ջրօգտագործման վայրի հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ համասեփականության դեպքում՝ համասեփականատիրոջ/ համասեփականատերերի գրավոր համաձայնությունը:
3.	Սերվիտուտի իրավունքի անհրաժեշտության դեպքում՝ սերվիտուտի կամ համապատասխան գույքից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը:
4.	Տեղանքի սխեմա-հատակագիծ, որտեղ նշված են ջրառի և ջրահեռացման կետերը՝ աշխարհագրական կոորդինատներով (նույնականացման անհրաժեշտություն առաջանալու դեպքում նաև WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով):
5.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված՝ հիդրոերկրաբանական տեղեկատվություն և հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածք:

6.	Ծանուցված հորատման գործունեություն իրականացնող ընկերության, հորատող սարքավորման հաշվառման տվյալները, սարքավորման տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը և պարտավորություն հորատման հորի տվյալները ջրային պետական կադաստր ներկայացնելու վերաբերյալ:
7.	Հորատանցքի լուծարման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն՝ Կառավարության 2023 թվականի հունիսի 16-ի N 967-Ն որոշման համաձայն:

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

09.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ